“ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԹԵՄԻ 300-ԱՄՅԱԿԸ (ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՂԻ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ)” ԽՈՐԱԳՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ. սեպտեմբերի 15–16-ը Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք - Մոսկվայում՝ Հայ Առաքելական եկեղեցու առաջնորդարանի համալիրում, տեղի ունեցավ “Հայ Առաքելական եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի 300-ամյակը (պատմական ուղի և արդիականություն)” խորագրով միջազգային գիտաժողով: Միջոցառման գլխավոր կազմակերպիչներն էին Հայ Առաքելական եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմն ու թեմի հայագիտական կենտրոնը: Համակազմակերպիչներն էին՝ Մայր Աթոռ սուրբ Էջմիածինը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, Մ. Մաշտոցի անվ. հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտը (Մատենադարան), ՀՀ ազգային արխիվը, ՀՀ գիտության և կրթության նախարարությունը, ՀՀ ԳԿՆ գիտության պետական կոմիտեն, Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ), ՌԴ-ում ՀՀ դեսպանատունը, ՌԴ Մոսկովյան տարածաշրջանի պետական գլխավոր արխիվը: Գիտաժողովի կազմը խիստ ընդգրկուն էր՝ ՀՀ-ի, ՌԴ-ի, Ուկրաինայի տարբեր քաղաքների գիտական կենտրոնների առաջատար գիտնականներ, ռուսահայ թեմի հոգևոր գործիչներ: Գիտաժողովի հինգ նիստերում լսված 54 զեկուցումները նվիրված էին Հայ Առաքելական եկեղեցու Ռուսաստանի ու Նոր Նախիջևանի թեմի բազմաբնույթ գործունեության լուսաբանմանը՝ քաղաքական, սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային և այլն:

Գիտաշրջանի աշխատանքները բացման խոսքով ու օրհնանքի բարեմաղթանքով ողջունեց Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Երկրորդ Ամենայն հայոց կաթողիկոսը: Հայրապետի խոսքին հաջորդեցին Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայկական թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Ե. Ներսիսյանի, *ՌԴ-ում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան* Վ. Տողանյանի *ողջույնի խոսքերը:*

Լիագումար նիստում հանդես եկան Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի եկեղեցական արտաքին կապերի բաժանմունքի ղեկավար, վարդապետ Շահե Անանյանը՝ *հայ-ռուսական պաշտոնական մարդահամարում (1717–1828 թթ.) Հայ Առաքելական եկեղեցու դերի մասին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմ. գիտ. դոկտոր* Վալերի Թունյանը՝ *“Հայ Առաքելական եկեղեցու Աստրախանի թեմը 18-րդ դ. վերջին – 19-րդ դ. սկզբին”,*

Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական համալսարանի պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկտոր Ռոբերտ Ենգիբարյանը՝ *“Կրոնը որպես ազգային անհատականության, բարոյականության և հայրենասիրության հիմք”, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի փիլիսոփայության ամբիոնի վարիչ, փիլ. գիտ. թեկնածու* Գագիկ Գալիկյանը՝ *Ռուսաստանի հայկական գաղթօջախի ձևավորման առանձնահատկությունների մասին զեկուցումներով:*

Գիտաժողովի առաջին նիստում ՀՀ ազգային արխիվի փոխտնօրեն, պատմ. գիտ. թեկնածու Սոնյա Միրզոյանը *հանգամանալից ներկայացրեց Ռուսաստանի և Նոր Նախիջևանի պատմությունը Հայաստանի ազգային արխիվի փաստաթղթերում: Ռուսաստանում Հայ Առաքելական եկեղեցու թեմի ձևավորման անդրադարձներին էր նվիրված Մոսկվայի պետական համալսարանի Սփյուռքի պատմության լաբորատորիայի փորձագետ* Վահրամ Կարապետյանի *զեկուցումը:* Ալլա Տեր-Սարգսյանցը *(ՌԴ ԳԱ Ն. Միկլուխո-Մակլայի անվան ազգագրության և մարդաբանության ինստիտուտ, պատմ. գիտ. դոկտոր) անդրադարձավ Աստրախանում ռուսահայ թեմի ձևավորման նախադրյալներին:* Վիկտոր Հակոբյանը *(ՌԴ Պյատիգորսկի պետական համալսարան, պատմ. գիտ. թեկնածու) ներկայացրեց ռուսահայ թեմի նկատմամբ պետական քաղաքականության դրսևորումները Հյուսիսային Կովկասում:*

ՌԴ Տվեր քաղաքի սուրբ Հարություն եկեղեցու քահանա Ներսես Խանանյանը *լուսաբանեց Ռուսաստանում Հայ Առաքելական եկեղեցու արտաքին հոգևոր հարաբերությունները 2011–2017 թթ.: Սիրիայի քրիստոնյաների պաշտպանության հարցում ռուս-հայկական համագործակցությանն էր նվիրված Ռուսաստանի համաեկեղեցական ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի ասպիրանտ* Յարոսլավ Սովգիրայի *ելույթը: ՌԴ Վորոնեժի տնտեսագիտության և իրավունքի ինստիտուտի պրոֆեսոր, պատմ. գիտ. դոկտոր* Ստեփան Ստեփանյանցի *զեկուցան մեջ լուսաբանվեց ռուսահայ թեմի ծագման առանձնահատկությունները: 1905 թ. օգոստոսի 1-ի հայկական եկեղեցու գույքի բռնագրավման օրենքի մասին էր ՌԴ պատմության և միջազգային հարաբերությունների ինստիտուտի աշխատակից, պատմ. գիտ. դոկտոր* Սարկիս Կազարովի *ելույթը:* Գայանե Արսենյանն *(ՌԴ Մոսկովյան տարածաշրջանի պետական գլխավոր արխիվ, առաջատար գիտաշխատող) ու* Հասմիկ Ամիրջանյանը *(ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, պատմ. գիտ. թեկնածու) անդրադարձան ռուսահայ թեմի առաջնորդ Հովսեփ արք. Արղությանի գործունեությանը: ՌԴ հարավային դաշնային համալսարանի աշխատակից, պատմ. գիտ. դոկտոր* Նինա Կազարովան *իր ելույթով (“Հայ Առաքելական եկեղեցու*

բարեգործական գործունեությունը Դոնի Նախիջևանում 19-րդ դ. 2-րդ կես – 20-րդ դ. սկիզբ”) եզրափակեց առաջին նիստի աշխատանքները:

Գիտաժողովի երկրորդ նիստում ՌԴ ԳԱ աշխարհագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող Թամարա Գալիկյանը *ներկայացրեց “Հայկական տեղանունները Մոսկվայի քարտեզում” զեկուցումը, իսկ* Տիգրան Մանասյանը *(Մոսկվայի պետական համալսարան, պատմ. գիտ. թեկնածու) հանդես եկավ Լազարյանների տոհմի վերաբերյալ նորահայտ տեղեկությունների մասին հաղորդումով:* Մարգարիտա Սլավկոն *(ՌԴ ԳԱ ժողովրդական տնտեսության և պետական ծառայության ռուսական ակադեմիա, պատմ. գիտ. թեկնածու) համացանցային տեղեկատվական անվտանգության տեսանկյունից ներկայացրեց ռուսահայ եկեղեցու գործունեությունը՝ որպես Հայ Առաքելական եկեղեցու մերօրյա կարևորագույն խնդիրներից մեկը:* Ելենա Զաղացպանյանն *(Մոսկվայի պետական համալսարան, պատմ. գիտ. թեկնածու) անդրադարձավ Հայաստանի և Հայ Առաքելական եկեղեցու մասին ռուսական ուղղափառ հանրագիտարաններում առկա տվյալներին: Չերքեզահայերի հոգևոր կյանքի վերաբերյալ հետաքրքիր զեկուցում կարդաց* Սերգեյ Կտիտորովը *(ՌԴ Արմավիրի պետական մանկավարժական համալսարան, պատմ. գիտ. թեկնածու):* Լարիսա Ալեքսանյանի *զեկուցումը (ՌԴ ԱԳՆ, դիվանագիտության ակադեմիա) մարշալ Հովի. Բաղրամյանի անցած ուղու մասին էր, իսկ* Յուլիա Գերասիմովան *և* Տատյանա Լյուբինան *(ՌԴ Մոսկովյան տարածաշրջանի պետական գլխավոր արխիվ, պատմ. գիտ. թեկնածուներ) անդրադարձան Կոստանդնուպոլսում Մ.*Արմինե Անտոնյանը *ներկայացրեց Թուրքիայի հայ փախստականների դերը Ռուսաստանի հասարակական կյանքում:* Սյուզաննա Խոջամիրյանը *(Մատենադարան, գլխավոր ֆոնդապահ) “Նոր Նախիջևանի բարեգործական կազմակերպությունները արխիվային փաստաթղթերում” վերնագրով զեկուցման մեջ հանգամանորեն վերլուծեց արխիվային նորահայտ վավերագրերում խնդրո առարկա հարցը:* Տատյանա Սլավկոն *(ՌԴ ժողովրդական տնտեսության և պետական ծառայության ռուսական ակադեմիայի գիտաշխատող, պատմ. գիտ. դոկտոր) ներկայացրեց մեծարժեք արխիվային փաստաթղթեր հայկական ծագում ունեցող ռուսաբնակ անձանց վերաբերյալ: Քահանա* Գևորգ Գևորգյանը *[Գևորգյան ճեմարան (Էջմիածին), ԵՊՀ ասպիրանտ] ներկայացրեց դրիմահայերի հոգևոր-մշակութային կյանքի բազմաբնույթ դրվագներ:* Վարդան Պողոսյանը *(ՌԴ պատմության և արխիվագիտության ինստիտուտ) անդրադարձավ Ռուսաստանի երիտասարդության կյանքում Հայ Առաքելական եկեղեցու դերին:*

Գիտաժողովի առաջին օրվա երրորդ նիստը բացեց Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի աշխատակից, պատմ. գիտ. դոկտոր Արսեն Շա-

հինյանը՝ *“Համալսարանային հայագիտության և արևելագիտության ծագումը Ռուսական կայսրության մայրաքաղաք Սանկտ Պետերբուրգում” խորագիրը կրող զեկուցմամբ: Նույն քաղաքի Սուրբ Եկատերինա հայկական եկեղեցու քահանա* Սարգիս Չոփուրյանի *քննության առարկան էր Սանկտ Պետերբուրգի հայ պարբերական մամուլի զարգացման պատմությունը:* Սերգեյ Պանտելեևն *(ՌԴ, Մոսկովյան հոգևոր ակադեմիա, աստված. թեկնածու) անդրադարձավ հայ առաքելական և ռուս ուղղափառ եկեղեցիների պատկերապաշտության հարցերին:* Լարիսա Գրաբովան *(ՌԴ Սանկտ Պետերբուրգի գրականության և արվեստի կենտրոնական պետական արխիվ) ներկայացրեց պետերբուրգաբնակ անվանի ռեժիսոր և մանկավարժ Ռուբեն Աղամիրզյանի դերը Սանկտ Պետերբուրգի մշակութային կյանքում: Մոսկվայում հրատարակվող “Հայկական եկեղեցի” ամսագրի փոխտնօրեն, մշակութաբան* Նինա Գաբրիելյանը *հանդես եկավ “Մշակույթների երկխոսությունը Բորիս Օտարովի գեղանկարչության մեջ Ռուսաստանի հայազգի նկարիչների ստեղծագործության համատեքստում” խորագիրը կրող զեկուցմամբ:* Արմինե Մարտիրոսյանի *(ՌԴ Մոսկվայի լեզվագիտական համալսարան, բանաս. գիտ. թեկնածու) զեկուցումը վերնագրված էր “Հայկական երաժշտական մշակույթը Ռուսաստանում 20-րդ դ. երկրորդ կեսին”: ՌԴ արվեստագիտության պետական ինստիտուտի փոխտնօրեն, արվ. դոկտոր* Արմեն Ղազարյանն *ու Ղրիմի մշակույթի և արվեստի համալսարանի դոցենտ, պատմ. գիտ. թեկնածու* Օլգա Բանան *զեկուցեցին Նոր Նախիջևանի հայկական եկեղեցիների ճարտարապետության վերաբերյալ: ՌԴ արևելաքրիստոնեական հետաքննության զարգացման ֆոնդի գիտական ղեկավար, արվ. թեկնածու* Միքայել Առաքելյանը *հանդես եկավ “Ռուսաստանի հարավի հայկական եկեղեցիների 18–19-րդ - դարերի պատարագային առարկաները մոսկովյան Կրեմլի թանգարանների հավաքածուում”, իսկ Ուկրաինայի Լվով քաղաքի արվեստի ազգային ակադեմիայի աշխատակից, փիլ. գիտ. թեկնածու* Իրինա Գայուկը՝ *“Բելգորոդ-Դնեստրովյան, Իզմայիլի, Կիլիայի հայկական եկեղեցիների պատմության սակավ ուսումնասիրված հարցերը. խնդիրներ, վարկածներ, առեղծվածներ” զեկուցումներով: Երևանի գեղարվեստի ակադեմիայի ասպիրանտ* Անի Ենոքյանը *ներկայացրեց Ռուսաստանում հայկական առաջին տպագրության գծապատկերային հրատարակությունների համառոտ պատմությունը՝ արժևորելով դրանք որպես ռուսահայ մշակույթի կարևորագույն արգասիքներ: Հայաստանի ազգային պատկերասրահի ավագ գիտաշխատող, արվ. թեկնածու* Քնարիկ Ավետիսյանը *հանդես եկավ Ռուսաստանում նորագույն ժամանակաշրջանի հայկական եկեղեցիների ձևավորման առանձնահատկությունների մասին զեկուցումով:* Վլադիմիր Բեսոլովի *զեկուցումը (ՌԴ Մոսկվայի*

միջազգային ճարտարապետական ակադեմիայի Հյուսիս-կովկասյան ակադեմիական կենտրոնի պրոֆեսոր, միջազգային ճարտարապետական ակադեմիայի թղթակից անդամ) անդրադարձ էր հյուսիսկովկասյան հայության հոգևոր կյանքի առանձին դրվագներին:

Գիտաժողովի երկրորդ օրվա առաջին նիստում Վալերի Թունյանը *ներկայացրեց "Էջմիածին և Գանձասար. առասպել ու իրականություն" խորագիրը կրող զեկուցումը: ՌԴ Ուրալի հաղորդակցության պետական համալսարանի աշխատակից, մանկ. գիտ. թեկնածու* Վլադիմիր Բլոխինը *քննության առավ Հայ Առաքելական եկեղեցու պատմությունը Մոսկվայի հոգևոր ակադեմիայի ասպիրանտների ու դասախոսների ատենախոսություններում՝ բարձր գնահատելով վերջիններիս ներդրումը հայ եկեղեցու պատմության առանցքային հարցերում:* Լևոն Բատիևի *(ՌԴ ԳԱ հարավային գիտական կենտրոնի սոցիալ-տնտեսական և հումանիտար հետազոտությունների ինստիտուտ, պատմ. գիտ. թեկնածու) զեկուցումը նվիրված էր ցարական կառավարության կողմից Հայ Առաքելական եկեղեցու գույքի բռնագրավմանը՝ Ռուսական կայսրության ազգային քաղաքականության համատեքստում:*

ԵՊՀ մագիստրանտ Աշոտ Ավետիսյանը *հանգամանորեն ներկայացրեց ռուսահայ թեմը որպես գործոն՝ ազգային նկարագրի պահպանման հարցում:* Օկսանա Անտոնովայի *(Ռուսաստանի պետական հումանիտար համալսարան, արխիվագիտության ամբիոնի ավագ դասախոս) զեկուցումն արխիվային փաստաթղթերի հիման վրա կատարված քննություն էր՝ Լազարյան ինստիտուտի պատմության մեջ Հայ Առաքելական եկեղեցու կատարած դերի մասին:* Տաթևիկ Սարգսյանը *(ՌԴ ղրիմագիտության գիտահետազոտական մշակութային ժառանգության պահպանման կենտրոն, պատմ. գիտ. թեկնածու),* Յուլիա Գերասիմովան *և* Ալեքսանդր Կազակևիչը *(ՌԴ Մոսկովյան տարածաշրջանի պետական գլխավոր արխիվի գիտաշխատողներ, պատմ. գիտ. թեկնածուներ), քահանա* Դանիել Կուկույանը *(Հայ Առաքելական եկեղեցու Ռուսաստանի հարավի թեմի պատասխանատու քարտուղար, Սուրբ Սահակ և Սուրբ Մեսրոպ եկեղեցիների քահանա, պատմ. գիտ. թեկնածու),* Վաչագան Չոլախյանը *(ՌԴ Սարատովի ազգային գիտահետազոտական պետական համալսարանի պրոֆ., պատմ. գիտ. դոկտոր) իրենց զեկուցումներում վեր հանեցին Ռուսաստանում հայկական թեմի ու եկեղեցիների պատմության հետաքրքիր դրվագներ՝ մեկ անգամ ևս մատնանշելով թեմի կարևորությունը ռուսահայերի կյանքում: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող, պատմ. գիտ. թեկնածու* Մարինե Հարությունյանը *հանգամանորեն ներկայացրեց XIX դ. Նոր Նախիջևանի հայկական բարեգործական կազմակերպությունների լուսավորչական գործունեությունը:*

Երկրորդ նիստում ՌԴ Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի աշխատակից, պատմ. գիտ. դոկտոր Ալեքսանդր Կոռնիլովը *հանդես եկավ "Հնագանդության խրատներն Անանիա Նարեկացու և Գրիգոր Նարեկացու երկերում. նշանակությունը տեղեկատվական հասարակության համար" զեկուցումով: Ռուսաստանի ԳԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, փիլ. գիտ. դոկտոր* Սուրեն Զոլյանը *հանդես եկավ "Վարդավառի վարդը" – Վահան Տերյանի և Վյաչեսլավ Իվանովի երկխոսությունը" խորագիրը կրող զեկուցմամբ:*

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի աշխատակից, բանաս. գիտ. դոկտոր Հայկանուշ Մեսրոպյանը, *ՌԴ ԳԱ լեզվագիտության ինստիտուտի աշխատակից, բանաս. գիտ. թեկնածու* Արեգ Բայանդուրը *և ՌԴ ԳԱ Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի Ռուսաստանի և ԱՊՀ ժողովուրդների բաժնի ավագ գիտաշխատող, փիլ. գիտ. թեկնածու* Բուրաստան Զուլումյանը *ներկայացրեցին հայոց լեզվի ուսուցման մեթոդները, զարգացման առանձնահատկություններն ու հեռանկարները Ռուսաստանի հայկական և ռուսական միջավայրերում:*

Գիտաժողովի արդյունքներն ամփոփելիս նշվեց, որ այն անցավ բարձր մակարդակով, որ մասնակիցները միահամուռ են մեկ գաղափարի շուրջ, այն է՝ Հայ Առաքելական եկեղեցու ռուսական թեմն իր գոյության ընթացքում եղել և մնում է ռուսահայերի ազգային նկարագրի պահպանման ու հայ-ռուսական բազմաբնույթ առնչությունների զարգացման փարոսը:

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ